ՀՏԴ 328(479.25)

Ա.Ս. ՂԱԶԱՐՅԱՆ, Կ.Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՇՈՒՐՋ

Հաշվի առնելով նոր մարտահրավերները՝ հոդվածում փորձ է արվում հիմնավորել համահայկական նոր կառույց ստեղծելու անհրաժեշտությունը: Նորաստեղծ համահայկական կառույցը կկարողանա համակարգել հայկական Սփյուռքի կազմակերպությունների գործունեությունը՝ ի նպաստ հայրենիքի: Ենթադրվում է երկու ճանապարհ՝ հասնելու համահայկական կառույց ստեղծելու նպատակին. նախ պետք է ստեղծել համահայկական մշակութային կառույց, այնուհետև հասարակական – քաղաքական ներկայացուցչական սկզբունքով գործող մի կառույց, որը կհամակարգի Հայրենիք-Սփյուռք կապերն ու հարաբերությունները:

***Առանցքային բառեր.*** հայկական Սփյուռք, համահայկական կառույց, անկախություն, Սփյուռքի նախարարություն:

Հայ ազգը դարերի խորքից փորձել է համախմբվել հանուն պետականության, հանուն Հայրենիքի, բայց, ցավոք, մեծ մասամբ չի հաջողել: Սփյուռքի հայությունը նույնպես փորձել է համախմբվել, միավորվել, հատկապես, երբ Հայաստանն անկախացավ: Թեպետ, նկատենք, որ միավորիչ նախաձեռնություններն ու շարժումները նոր չեն հայկական իրականության մեջ: Սկսած 19-րդ դարի 2-րդ կեսից թե՛ արևելահայության, և թե՛ արևմտահայության կյանքում նման նախաձեռնություններ եղել են: Սկզբնական շրջանում նույնիսկ ՀՅ Դաշնակցությունն է ունեցել նման հավակնություն՝ հիմնադրվելով իբրև հայ հեղափոխականների դաշնակցություն: 1906-ին Եգիպտոսում ստեղծված Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիրների ու մանավանդ, եթե կարելի է այդպես ասել, նախահիմնադիրների ծրագրերում եղել է համահայկական ու վերկուսակցական կառույցի ստեղծման գաղափարը հենց Alliance Israelite-ի (Իսրայելական դաշինք) օրինակով |1|: Իսկ Մեծ եղեռնից հետո, խորհրդահայ պետական ղեկավարների նախաձեռնությամբ արտասահմանում գործող ՀՕԿ-ի (Հայաստանի օգնության կոմիտե) գործունեության առաջին շրջանը (Հովի. Թումանյանի և Արամայիս Երզնկյանի գլխավորությամբ), այսինքն՝ մինչև գաղափարի այլասերումը համայնավարացման «տեսլականով», մայր հայրենիքի շուրջը համախմբվելու տեսակետից նույնպես կարելի է համարել համահայկական կառույց ստեղծելու փորձ, ինչպիսին է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ստեղծումն արդեն մեր օրերում |2|: Նույն այդ մտավորականներից ոմանք հետագայում իրար հաջորդող 3 փորձ կատարեցին Փարիզում ու Լոզանում համասփյուռքյան կառույցով ամրապնդելու (վերապատվելի Գառնուզյանի գլխավորությամբ) սփյուռքահայությանը, ինչը հանդիպեց մեր ավանդական կուսակցությունների լուռ ժխտողականության պատին: Իսկ ավելի ուշ, արդեն 70-ականների վերջերին, Միացյալ Նահանգներում ՀՅԴ-ի, ՌԱԿ-ի ու ՀԲԸՄ-ի ջանքերով ստեղծվեց

Ամերիկայի հայկական համագումարը (ԱՀՀ)՝ ամերիկահայության քվեարկու ուժը հօգուտ հայության շահերի օգտագործելու, այսինքն՝ լոբբիստական նպատակամղումով: (Շուտով ՀՅԴ-ն լքեց համագումարը, իսկ ՌԱԿ-ը ավելորդ գտավ իր ներկայությունն այնտեղ, որտեղ դաշնակցությունն արդեն չկար): Բարեբախտաբար, Ամերիկայի հայկական համագումարն առ այսօր հաջողությամբ շարունակում է իր գործունեությունը, թեև վերջին շրջանում հատկապես տուժել է իր գլխավոր դոնորներից՝ Ժերարդ Գաֆեսճյանի փոփոխամիտ ու երբեմն էլ անմիտ վարմունքի պատճառով: Ի հակադրություն մեր մյուս լոբբիստական կազմակերպության՝ ՀՅԴ Հայ դատի գրասենյակի, որը հանդես է գալիս որպես ցանցային կառույց՝ տարբեր քաղաքներում գործող իր մյուս գրասենյակներով, ԱՀՀ-ն գործում է անհատների ղեկավարությամբ, որոնք առավել ամուր կապեր ունեն ԱՄՆ-ի պետքարտուղարության հետ և ընդհանրապես լոյալ դիրք՝ ՀՀ իշխանությունների նկատմամբ: ՀՀՇ-ի մեկուսի ու մեկուսապաշտ գործունեությունից ու մանավանդ նրա առաջնորդի՝ հայությանը երկու դասի՝ նարինջ ուտողների և նարինջ չուտողների բաժանելու իմաստո՛ւն կեցվածքից, այդ կազմակերպությունը հայությանը միավորելու նպատակ չուներ և, հետևաբար, ի վերջո վերածվեց սոսկական կուսակցության |3|:

Որպես համահայկական նախաձեռնության փորձ պետք է հաշվի առնել նաև Արա Աբրահամյանի գլխավորությամբ 2001-ին Մոսկվայում Հայերի համաշխարհային կոնգրեսի ստեղծումը |4|, որը շոշափելի հաջողություն է արձանագրել առայժմ միայն Ռուսաստանի տարածքում, առավելաբար նույնանալով ու նույնացվելով Ռուսաստանի հայերի միության արդյունավետ գործունեության հետ: Զուգահեռաբար, այժմ Մոսկվայում «Արևմտահայերի խորհրդարան» ստեղծելու՝ ըստ մեզ ուտոպիստական փորձ է կատարում Կարեն Միքայելյանի գլխավորությամբ գործող խմբակը և նույնիսկ հավաքներ կազմակերպում Կիպրոսում, Մոսկվայում և այլուր:

Պատահական չէ, որ հենց վերջերս, Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի (USC) հայկական ուսումնասիրությունների ինստիտուտի նախաձեռնությամբ գումարվեց միջազգային սիմպոզիում՝ «Հայ սփյուռք. ընտրովի ղեկավարություն և համաշխարհային կառույց» խորագրով, հանրածանոթ հրապարակախոս և Լինսի հիմնադրամի փոխնախագահ ու Միացյալ հայկական ֆոնդի տնօրեն Հարութ Սասունյանի և խմբի ջանքերով: Իր հոդվածներից մեկում Հ. Սասունյանն առաջարկում էր համագաղութային այդ ընտրությունները կատարել «յուրաքանչյուր 20 հազարը 1 ներկայացուցիչ» սկզբունքով |5|:

Որակյալ ներկայացուցչականության խնդիրը սփյուռքի պարագայում միշտ էլ կարևոր է եղել և մնում է կարևոր: Մեխանիկական այդ մոտեցման փոխարեն գրախոսվող հավելվածում գեներալ Հայկ Քոթանջյանն իր «Համաշխարհային հայության համակարգի քայքայման սպառնալիքի հաղթահարման ուղիները» հոդվածում առաջարկում է ներկայացուցչական ժողովի գաղափարը, որի արդյունքում կստեղծվի

«Համաշխարհային հայության գլխավոր կազմակերպությունների նախագահների համաշխարհային կոնգրես՝ Հայաստանի Հանրապետության նախագահի նախագահությամբ» |6|: Այլ խոսքով՝ հրեական մոդելին մոտ մի կառույց, որի խնդիրն է լինելու ապահովել սփյուռքահայության և հայկական պետականության անվտանգությունը, հաղթահարել առկա խոչընդոտները և սպառնալիքները, համայն հայության ջանքերը ծառայեցնել ի շահ հայության և հայկական պետականության:

Այսօր Լոս Անջելեսում գործում է «Արևմտյան Հայաստանի կառավարությունը»՝ Միքայել Սոսիկյանի գլխավորությամբ: Փարիզում գործում է «Արևմտյան Հայաստանի Ազգային խորհուրդը», որի ղեկավարն է Արմենակ Աբրահամյանը, իսկ վարչապետը՝ Տիգրան Փաշաբեզյանը: Վերջին շրջանում ակտիվացել է նաև Կարեն Միքայելյանի կազմակերպությունը |7|: Պետք է նշել, որ Արևմտյան Հայաստանի կառավարության առկայությունը իրավական ուժ կունենար միայն այն ժամանակ, եթե լիներ Արևմտյան Հայաստան պետություն, բայց վերջինս՝ որպես պետություն, չի եղել, այլ այդ տարածքը եղել է Հայաստանի Առաջին Հանրապետության տարածքը, որն օկուպացվել է Թուրքիայի կողմից: Փաստորեն վերոնշյալ կազմակերպությունները հասարակական հիմունքով կազմակերպություններ են:

Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները որակական նոր մակարդակով կառուցելու ուղղությամբ շրջադարձային էր 1999թ. սեպտեմբերի 22-23-ին Երևանում աշխարհի 50 երկրներից, Հայաստանի Հանրապետության և Արցախի շուրջ 1200 հոգևոր և աշխարհիկ բոլոր կառույցների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը, որը համահայկական կառույց ստեղծելու Հայաստանի Հանրապետության առաջին փորձն էր |8|: 2-րդ խորհրդաժողովը տեղի է ունեցել 2002թ. մայիսին, 3-րդ համահայկական խորհրդաժողովը՝ 2006թ. սեպտեմբերին: Առաջին երեք համաժողովները կազմակերպել է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, իսկ 2011թ.ից սկսած՝ այդ առաքելությունն իրականացնում է ՀՀ Սփյուռքի նախարարությունը: 4-րդ համաժողովը տեղի ունեցավ 2015թ. սեպտեմբերի 19-ին Երևանի մարզահամերգային համալիրի հանդիսությունների դահլիճում, այն կրում էր «Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների համահայկական համաժողով» անվանումը: Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովի շնորհիվ Հայրենիք-Սփյուռք համագործակցության հետագա գործընթացը դարձավ շարունակական |9|:

Ցավոք, պետք է նշել, ինչպես դիպուկ նկատել է պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանը, որ Սփյուռքն իր մեջ ուժ չգտավ վեր կանգնելու կուսակցական, անձնական և հատվածային նեղ շահերից, ի վիճակի չեղավ ձևավորելու սփյուռքի մասշտաբներին համապատասխան համահայկական համազգային մտածողություն և գիտակցություն, չկարողացավ ստեղծել համասփյուռքյան ամբողջական, համապարփակ և հեղինակավոր կազմակերպություն, զրկվեց իր քաղաքական, տնտեսական ու ֆի-

նանսական ներուժն ամբողջությամբ դրսևորելու, իսկ անհրաժեշտության դեպքում՝ այն պաշտպանական-դիմադրողական ուժի վերածելու հնարավորությունից |10|:

Այսօր պետք է արձանագրել նաև, որ հայկական Սփյուռքից դեպի Հայաստան զանգվածային հոսք չեղավ, ընդհակառակը. Հայաստանի անկախացման և արցախյան ազատամարտի տարիներին, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, Հայաստանից մոտ մեկ միլիոն մարդ հեռացավ անվերադարձ: Նորանկախ Հայաստանի իշխանությունների համար հայրենադարձությունը օրակարգային հարց չդարձավ, իսկ երբ դարձավ, այն, ցավոք, խորհրդանշական իրադարձություններից այն կողմ չանցավ:

Մյուս կողմից՝ հայաստանաբնակ հայ հասարակությանը նույնպես չմտահոգեց հայկական Սփյուռքից հայրենադարձության հարցը: Եվ, վերջապես, այն փոքրաթիվ հայերը, ովքեր հայրենադարձ եղան, պետք է նշել, որ զուտ իրենց անձնական որոշմամբ են վերադարձել, այլ ոչ թե ծրագրավորված նախաձեռնության արդյունքում:

Եզրակացնելով պետք է նշել, որ համահայկական կառույց ստեղծելու նպատակին հասնելու համար ենթադրվում է երկու ճանապարհ, առաջին՝ պետք է համահայկական **մշակութային կառույց** ստեղծել, այնուհետև **տնտեսական կառույց**, որից հետո, նոր միայն, կարծում ենք, հնարավոր կլինի ստեղծել **հասարակական-քաղաքական ներկայացուցչական սկզբունքով կառույց**, որի առանցքում, անշուշտ, պետք է լինեն համահայկական առաջնային հիմնախնդիրները: Եվ երկրորդ, որ տնտեսական, ֆինանսական և հոգևոր-մշակութային ոլորտները համակարգող կենտրոնի գործունեությունից որոշ ժամանակ անց հարկավոր է ստեղծել հասարակական – քաղաքական ներկայացուցչական սկզբունքով գործող մի կառույց (կենտրոն), որը կհամակարգի Հայրենիքի և Սփյուռքի միջև առկա բոլոր կապերն ու հարաբերությունները՝ համագործակցելով Սփյուռքի նախարարության հետ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. **Ավետիքյան Հ.,** Հայության ուժերը համախմբելու առաջադրանքով,Ազգ, թիվ 237, 23.12.2010թ.:
2. **Նույն Տեղում:**
3. **Նույն տեղում:**
4. **Союз армян России,** տե՛ս http://www.sarinfo.org/:
5. **Ավետիքյան Հ.,** Հայության ուժերը համախմբելու առաջադրանքով,Ազգ, թիվ 237, 23.12.2010թ.:
6. **Քոթանջյան Հ.,** Համաշխարհային հայության համակարգի քայքայման սպառնալիքը:
7. **Պապյան Ա.,** հարցազրույց է տալիս Իրատես de facto-ին, Իրատես de facto թիվ 73, 15.11-17.11.2011թ:

8. **Հայաստանը համայն հայության հայրենիքն է.** Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի, 1999, N 4 (12), հոկտեմբեր, էջ 6: Հայաստանի Հանրապետություն, 23 սեպտեմբերի, 1999:
9. **Մինասյան Է., Վարդանյան Ա.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին 1991-2009թթ, Ստեփանակերտ, 2010, էջ 113:
10. **Աշխատանքային տետրեր,** Հայկական բանակ հանդեսի հավելված,4(16), 2010, էջ 76:

**А.С. КАЗАРЯН, К.В. САРГСЯН**

## О ВСЕАРМЯНСКОЙ СТРУКТУРЕ

Армянский народ на протяжении веков пытался объединиться во имя государственности, во имя родины, но, к сожалению, в основном это ему не удалось. Армянская диаспора постаралась объединиться, особенно после того, когда Армения стала независимой. Для создания всеармянской структуры предлагаются два способа: во-первых, создать культурное учреждение, а во-вторых, создать социальную структуру, основанную на принципе политического представительства, которая будет координировать связь между Родиной и диаспорой на основе сотрудничества с Министерством диаспоры.

***Ключевые слова:*** армянская диаспора, всеармянская структура, независимость, Министерство диаспоры.

**A.S. GHAZARYAN, K.V. SARGSYAN**

## THE PANARMENIAN STRUCTURE

For centuries Armenians have tried to unite for the sake of their homeland, but, unfortunately, they have not manly succeeded. The Armenian diaspora has also tried to unite, consolidate, especially when Armenia became independent. To achieve the aim of creating a Panarmenian structure, two ways are considered: first, to create a cultural institution, then create a socio-political structure centre based on the principles of representation, which will coordinate all the relations between Armenia and the Diaspora, cooperating with the Ministry of Diaspora.

***Keywords:*** Armenian Diaspora, Panarmenian structure, independent, Ministry of Diaspora.